№ 133 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23 № 133

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 ռուբ., 11 ամս. 10 ռ., 10 ամս. 9 ռ., 9 ամս. 8 ռ., 7 և 6 ամս. 6 ռ., 5 ամս. 5 ռ., 4 ամս. 4 ռ., 3 ամս. 3 ռ., 2 ամս. 2 ռ., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.։ Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 ռուբլի, Թուրքիա 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱԶԴ

«ՄՇԱԿԻ» այն բաժանորդները, որոնք ուղարկել են տարեկան բաժանորդագնի առաջին կէսը, թող շտապեն ուղարկել երկրորդ կէսը, որպէսզի լրագրի առաքման գործում տեղի չունենայ ընդհատում։

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ դպրանոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
բարձրագոյն կրթութեամբ, որ պիտի աւանդէ առաջին երեք դասարաններում ռուսաց լեզու՝ 15 դաս, և վերջին չորս դասարաններում լատիներէն՝ 12 դաս։
Դասագինն է 60 ռուբլի։ Ռոճիկը տրվում է պաշտօն մտնելու օրից։
Ցանկացողները պէտք է դիմեն տեսչին մինչև օգոստոսի 10-ը։
Տեսուչ դպրանոցի՝ Ե. Շահազիզ
(առ.) 579. 5—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“
Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական ՕՐԱԹԵՐԹ
Սեփական եւ գործակալական հեռագիրներ
Օրաթերթը հրատարակվելու է յուլիսի 1-ից (ներկայ տարվայ)։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 4 ռ., 3 ամիսը 2 ռ. 50 կ., ամիսը 1 ռ.։ Արտասահմանի համար մինչև տարվայ վերջը 6 ռ.։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «СУРАНДАКЪ»
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան
Հրատարակիչ՝ Գէորգ Զիլինգարեան
Յայտարարութիւններ ամեն լեզուով և մատչելի գներով։
(շ.ն.հ. (առ.) 573. 3—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԷՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ
ֆաբրիկայի
Գտնվում է Կայսրութեան բոլոր մեծ քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում—Գոլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Գները ֆաբրիկային են։
(Ե.) ա. 197. 25—15

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վոկզալնայա 8, տ. Էնֆիաճանցի։
Տելեֆոն 695
Ե. Գ. ՖԷԹՕՐՕՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։
Վ. Դ. ԴԱՄԲԱՇԻՋԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և նեխաների։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻՋԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երխանների, 2—3 ժամը։
Բ. Մ. ՄՈՒՍԽԵԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Դ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Ն. Դ. ԶԻԶԻՆԱԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։
(օ. մ.) ա. 38. 100—53

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ հինգշաբթի, յուլիսի 3-ին, երեկոյեան ժամը 9-ին, Ժողովարանի ամարային շինութեան մէջ նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

քուէարկելու այն անձերին, որոնք առաջարկված են Ժողովարանի կանոնադրութեան։
(23, յուլ. 3) (առ.) 581. 2—1

ՈՂՋԵՐԹԻ ԺԱՄԻՆ

Վեհափառ Կաթողիկոսը այսօր մեկնում է Թիֆլիսից դէպի Էջմիածին։

Թիֆլիսում Վեհափառը առիթ ունեցաւ ծանօթանալու հայ հասարակութեան զանազան խաւերի և հայկական հիմնարկութիւնների գործունէութեան ու նրանց ներկայացուցիչների հետ։

Այն բազմաթիւ պատգամաւորութիւնները, որոնք ներկայացան Վեհափառին և ողջունեցին նրա գալուստը, միաբերան ընդհանուր յոյս էին յայտնում, որ Վեհափառին կաջողվի բարեկարգութիւն մտցնել այն գործերի մէջ, որոնք կապված են Էջմիածնի հետ, և այդպիսով ապահովել կրթական գործի զարգացումը, կանոնաւորել վարչական ու կալուածական խնդիրների լուծումը և ընթացք տալ միւս հարցերին, որոնք վերաբերում են թէ վանքին և միաբանութեանը և թէ Էջմիածնի յարաբերութիւններին դրսի աշխարհի հետ։

Ոգևորված կեցցէների, ջերմ շնորհաւորութիւնների և սրտաբուղխ ողջոյնների հետ զուգընթաց բոլոր ճառերի ու դիմումների մէջ լսվում էր ժողովրդի խորին վիշտը իրերի ներկայ տխուր վիճակի մասին և նրա կարօտի փափագը օր առաջ կարգի բերված տեսնել քայքայված գործերը և կանոնաւոր ընթացքի մէջ դրված վարչական և կրթական հոգատարութիւնը։

Բարեկարգութեան կարիքը հիմնական առանցքն էր, որի շուրջը պտտում էին բոլոր ցանկութիւնները և դիմումները։

Եւ հասկանալի է, թէ ինչու էր այդպէս։

Առաջ և երբեմն այն դրութիւնը, որ տիրում է մեր իրականութեան մէջ, ապարդիւն է մղել հրամայողական պահանջ՝ վերջ դնելու տարտամ և աղէտաբեր այն վիճակին, որը դարձել է անտանելի և մահաբեր բոլորի համար։

Եւ ահա ամենի առաջ պարզվել է դրական գործի, սիստեմական և լուրջ գործունութիւնների անհրաժեշտութիւնը։

Ոչ մի ժամանակ անցեալում հայ հասարակութիւնը այն աստիճան դրժգոհ չէ եղել իր հանրային գործերի կառավարութեան եղանակներից, ինչպէս այժմ։ Եւ անշուշտ՝ Վեհափառ Կաթողիկոսի առաջ դրված հերթական քննութեան և լուծման խնդիրները ամենևին դիւրիններից չէն, մանաւանդ որ ինքը պատմական շրջանն էլ, որ մենք անցնում ենք, ունի իր ազդեցութիւնները և ծանրութիւնը։

Վեհափառը, մեկնելով Թիֆլիսից, սրտագեղ բերկրանքների և ջերմ ողջոյնների հետ միասին տանում է իր հետ և ժամանակից մեր վշտի ու հոգսի ծանրութիւնը։

Եւ մենք միայն մի բան ենք ցանկանում, որ Կաթողիկոսին աջողվի թեթևացնել այդ ծանրութիւնը, որ հանրային է մեր բոլորի համար։

Իսկ մեզ մնում է աջակցել նրան այդ դժուար և պատասխանատու գործի մէջ։

Ա. Քալանթար

ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՑՏԱԳԻՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգ, 20 յունիսի

Ռուսաց կառավարութիւնը ուղղեց օտարազգի կառավարութիւններին հետևեալ հեռագրական յայտագիրը.

«Զը նայած որ շահի կառավարութիւնը Ռուսաստանի և Անգլիայի խորհրդով միջոցներ ձեռք առաւ վերականգնելու Պարսկաստանում կառավարութեան նախկին ձևը և իրականացնելու անհրաժեշտ բարենորոգումներ, յեղափոխական շարժումը Իրանի կենտրօնում դեռ շարունակվում է։

«Թէհրանի բրիտանական և ռուսական միսսիաների քայլերը, առաջն առնելու բախտիարների շարժմանը դէպի մայրաքաղաք՝ այդ ցեղի խան Սարդար Ասադի, Ղազվինի և Բաշտի յեղափոխականների, ինչպէս նաև կովկասցի եկեղորների առաջնորդութեամբ Գիլանի նահանգապետ Սիփէհդարի աջակցութեամբ, աջողութեամբ չը պսակվեցին և շահի կառավարութեան հակառակորդների ոյժերը ատաճանաբար մօտենում են Թէհրանին, ուր կան այնպիսի տարրեր, որոնք պատրաստ են միանալ նրանց հետ, և այժմ արդէն նկատվում է ուժեղ յուզմունք։

«Գնելով այդ կերպ ստեղծված իրերի դրութիւնը, կայսերական կառավարութիւնը գտաւ, որ իր քաղաքականութեան հիմունքը Պարսկաստանում պէտք է առաջվայ նման մնայ չը միջամտելու սկզբունքը այդ երկրի ներքին գործերին և շահի ու իր ժողովրդի կուսին, ինչ տեսակ էլ որ լինի այդ կուսի վախճանը։

«Ընդ սմին սակայն մենք չը կարողացանք ուշադրութեան չառնել, որ, բախտիարների ու յեղափոխականների Թէհրան մտնելու դէպքում, ռուսական և եւրօպական միսսիաները, հատատութիւնները, հպատակները, նաև մեր Էնզելի-Թէհրանի ճանապարհը կարող են ծայրայեղ վտանգաւոր դրութեան մատնվել, ևս առաւել որ, մեր ձեռքի տակ եղած տեղեկութիւնների համաձայն, շահի միակ կանոնաւոր զօրամասը—պարսկական կօզակների բրիգադան—ներկայումս այն աստիճան թուլացել է, որ հազիւ թէ կարող լինի պահպանել կարգ ու կանոնը Թէհրանում։

«Այս հանգամանքը կայսերական կառավարութեան վրա բարոյական պարտականութիւն է դնում՝ ձեռք առնել բոլոր հնարաւոր միջոցները, որպէսզի հարկաւորութեան դէպքում յիշեալ հատատութիւններին և հպատակներին կարելի լինի իսկական օգնութիւն հասցնել Թէհրանի և Էնզէլիի հաղորդակցութիւնը ազատ ապահովելու համար ամեն պայմաններում։

«Այդ նկատումով վճռված է այժմ և եթէ Բագուից Էնզէլի ուղարկել կէս գումարտակ կօզակներ թնդանօթներով։ Զօրամասը գնալու է մինչև Ղազվին, ապահովելով Ղազվինի և Կասպիական ծովի ճանապարհը։ Զօրամասի յետագայ շարժումը կախված կը լինի դէպքերի ընթացքից և կարող է տեղի ունենալ ոչ այլ կերպ, բայց եթէ Թէհրանի կայսերական միսսիայի պահանջով վերոյիշեալ վտանգը հասնելու դէպքում։

Զօրամասի հրամանատարը կը ստանայ ամենասովորական հրահանգներ այն մտքով, որ զօրամասի նպատակը պէտք է լինի բացառապէս պաշտպանութիւն ցոյց տալ ռուսական և օտարազգի միսսիաներին, առանց որևէ միջամտութեան Պարսկաստանում կատարվող քաղաքական կուսին և առհասարակ Պարսկաստանի ներքին գործերին։

«Ռուսական զօրքերը Պարսկաստանի սահմաններում կը մնան մինչև այն օրը, երբ ռուսների, նաև բոլոր օտարազգի դիպլոմատիական ներկայացուցիչների, հատատութիւնների և հպատակների կեանքը և սեփականութիւն լիապէս ապահովված կը լինեն»։
(Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բերլին, 20 յունվարի

Վօլֆի գործակալութեան տեղեկութիւնների համաձայն, Վիլհէլմը սովորական ճանապարհորդութիւն կը կատարէ դէպի հիւսիս սկզբում որոշած ժամանակից մի փոքր ուշ։ Պատճառը կապում են կանցլէրական ճգնաժամի հետ։ (Հ. Գ.)

—

Պարիզի Լիւքսէնբուրգեան այգում մի անյայտ անձնաւորութիւն տարճանակ է պարպել եօթ տարեկան մի աղջկայ վրա, բայց, բարեբաղդաբար, վրիպել է. կրակոցին խլոյն կալանաւորել են, որը իրան անուանել է հայ հրապարակախօս Թումայեան։ Հարցաքննութեան ժամանակ նա բացատրել է, որ իր այդ քայլով ուզում էր յիշեցնել ֆրանսիական մայրերին հայկական սարսափելի կոտորածների մասին։ Նրա գրպանում գտել են մի գրքոյկ նուիրված Կլեմանսոյին, ուր նկարագրված են Հայաստանի մէջ Ջարդերը։ Թումայեանը արդէն միևնոյն նպատակով կրակել էր 1907 թ.ին, որի համար նստեց երկու տարի գժանոցում։

—

«Россія» լրագիրը հաղորդում է, որ իբր ժանդարմական իշխանութիւնը տեղեկութիւններ է ունեցել, որ ֆինլանդացիները գնել են մի քանի մօտօրաշարժ մակոյկներ կայսերական նաւը շիներներում ջրասոյզ անելու նպատակով։ («Б.»)

—

Պարիզ, 20 յունիսի

Պատգամաւորների պալատ։ Ընդհանուր քաղաքականութեան խնդրի քննութեան ժամանակ Ժօրէսը, խօսելով Կայսրի առաջիկայ այցելութեան մասին, յայտնում է, որ պատրաստ է ընդունել, որ պետութիւնների իշխանաւորների հանդիպումը, ովքեր էլ որ նրանք լինեն, կարող են նպաստել խաղաղութեան պահպանման։ Անարգարացի կը լինէր, որ Եւրոպայում, էր գործում են բազմաթիւ ըէակցիոն ոյժեր, ժողովուրդների դատապարտութիւնը տար սսկ... (պակասում է) գերմանական սոցիալիստները 1876 թ. գուշակեցին, որ սարկացած Ֆրանսիան կը հարկադրվի ընկնել Ռուսաստանի գիրկը, հետևաբար Ֆրանսիան առիթ ունի ներողութիւն խնդրելու, սակայն կան սահմաններ, որոնցից այն կողմը չը պէտք է անցնել։

Ժօրէսը մատնանիշ է անում այն բողոքների վրա, որ Անգլիան բարձրացրեց Կայսրի այցելութեան դէմ, և յայտնում է, որ ժամարեր ցարիզմի նաւը ստիպված կը լինի երերվել ծովի վրա Կոսուի շուրջը։

Գալատի նախագահ Բրիսսօնը բողոքում է Ժօրէսի խօսքերի դէմ։

Պիշոնը յայտնում է (բոլոր աթոռներում ծափահարութիւն, բացի սօցիալիստներից), որ արտաքին գործերի մինիստրը չէ կարող առանց բուռն բողոքների այդպիսի խօսքեր թոյլ տալ։ Նա ասում է. «Որովհետև դուք մատնանշեցիք Անգլիայի օրինակը, ես կը պատասխանեմ նոյնպէս, թէ նման հանգամանքներում ինչպէս վարվեց անգլիական ստատս-սեկրէտարի օգնականը պատասխանելով համայնքների պալատում մի սօցիալիստի. Ցարը կընդունվի մեր երկրում իբրև դաշնակից, նաև ինչպէս Ֆրանսիայի բարեկամ, և Թագաւորը, որ եռանդուն աջակցութիւն է ցոյց տալիս միջազգային խաղաղութեան պահպանման»։

Ծափահարութիւն բոլոր աթոռներում, բացի ծայրայեղ ձախակողմից, որտեղից լսվում են խիստ բացագանչութիւններ Ցարի դէմ։

Ժօրէսն ասում է, որ նա ցանկանում է միայն, որ այն ռուսները, որոնք իրանց զոհում են... (պակասում է), գիտեն, որ նրանց հերոսութիւնը անճանաչելի չի մնայ։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 20 յունիսի

Ղումից բախտիարները դուրս են եկել Սարդար Ասադի առաջնորդութեամբ։ Թէհրանից նրա դէմ ուղարկված շահի ծառայութեան մէջ գտնվող բախտիարների զօրախումբն անցաւ նրա կողմը։

Շահը Սալթանաբադ կանչեց անգլիական և ռուսական ներկայացուցիչներին դրութեան մասին խորհելու համար։ (Հ. Գ.)

—

Բերլին, 20 յունիսի

Լրագրական այն տեղեկութիւնների առիթով, իբր Գերմանիան Ռուսաստանին carte blanche է ներկայացրել Պարսկաստանում, «Զիւդ. Էրիկսս. Կօր.»-ը ասում է. «Ոչ Շանդարտի գծի վրա, ոչ ուրիշ տեղում Գերմանիան այդ մտքով առաջարկութիւն չէ արել ռուսական դիպլոմատիային, Ցայտնի է, թէ ինչ շաների է հետամուտ Գերմանիան Պարսկաստանում, նաև, որ Գերմանիան երբէք չէ փորձել Անգլիայի համաձայնութեամբ շարժել Պարսկաստանի նկատմամբ ռուս կառավարութեան ունեցած քաղաքականութեան հիմունքը»։ (Հ. Գ.)

—

«Н. Тифлисъ» թերթի սեփական թղթակիցը հեռագրում է Բագուից, յունիսի 21-ից.

Բաշտից հեռագրում են, թէ «Կերէջինի կամուրջի մօտ, որ պաշտպանում են սարվազները և երկու-հարիւրեակ պարսիկ կօզակներ, թնդանօթային կռիւ է։ Կամուրջը մասամբ վնասվեց։ Յարձակվողների քանակում երևում են փախստական սարվազներ։

Ասում են, որ կամուրջը յեղափոխականների ձեռքումն է։ Սպասում են մանրամասն տեղեկութիւնների։

Ցամաս, բայց յուսահատական դիմադրութիւնից յետոյ, Կերէջինի կամուրջը յեղափոխականները վերցրին։ Կօզակները փախան կուսի դաշտում թողնելով մի քանի թնդանօթներ։

—

Լօնդօն, 21 յունիսի

Ռէյտերին հաղորդում են Թէհրանից, որ առաւօտեան շահի կօզակների և յեղափոխականների միջև Գիլանի նահանգապետ Սիփէհդարի հրամանատարութեամբ Շանաբադում, Թէհրանի մօտ, տեղի ունեցաւ պատերազմ։ Կօզակները կորցրին մի քանի մարդ սպանված։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։

—

Թէհրան, 21 յունիսի

Դաշնակից միսսիաները վերջին փորձն են անում կանգնեցնել արիւնհեղութիւնը։ Գիշերը ճանապարհ են ընկնում Ալիաբադ՝ դիմաւորելու Սարդար Ասադին՝ թարգման Զէրչիլ և ռուսական միսսիայի կցորդ Բօմանովսկի և Եանզիման, Սիփէհդարին դիմաւորելու համար թարգման Բարանովսկի և մայոր Սաոկս, յայտնելու յարձակվողներին, որ, եթէ շարժումը

շարունակվի, տեղի կունենայ օտար միջամտութիւն։

—

Թէհրան. — Քաղաքում սպառնական տրամադրութիւն է տիրում։ Պահպանողականները պահանջում են անմիջապէս հեռացնել պաշտօնից Սադ Դօվլէին և դատաստանի Ինթարկել։

Նրան մեղադրում են, որ յեղափոխականների հետ յարաբերութիւն ունի և պաշտպանում է նրանց պահանջները։

Բայց շահը առ այժմ յամառ կերպով կանգնած է իր առածների վրա. նա վճռել է զիջումներ անել, որովհետև մինիստրութիւնը չէ խոստանում նրան աջողութեամբ ճնշել յեղափոխական շարժումը։

Շահի ընդունած որոշումը՝ դիկտատոր նշանակել յեղափոխականների դէմ կռիւ մղելու համար՝ փոխված է և օրէ-ցօր ըստպասվում է շահի մի նոր մանիֆէստը, որով հպատակներին շնորհվելու է քաղաքացիական լայն իրաւունքներ և լիակատար ներում (ամնիստիա)։

Շահը, երկիւղ կրելով իր կեանքի համար, վճռել է հեռացնել ծառայութիւնից յայտնի պահպանողականներին, ի թիւս որոնց Էմիր-Բահադուր-Զէնգին և նախկին զինուորական մինիստր Նարբ-ուս-Սալթանէին։ Վերջին ժամանակներս շահը մի տեսակ շփոթված դրութեան մէջ է ընկել և չը գիտէ որի խորհրդին դիմել։

Լեախովի դրութիւնը զգալի կերպով խախտված է և բոլորը սպասում են նրա հրաժարականին։

Ասում են, որ երբ հարցրին սարդար Ասադին, թէ կը կատարէ՞ նա, արդեօք, անգլիական և ռուսական ներկայացուցիչների խնդիրքը Թէհրանի վրա չը գնալու համար, թէ՞ ոչ, բախտիարցիների այդ պետը յայտնել է յուզմունքով, որ նրան ոչ մի բան չէ կարող կանգնեցնել, որովհետև նա հաւատում է ժողովրդական գործի աջողութեանը։

Ղազվինից ստացված լուրերի համաձայն, Սիփէհդարի և Մօկկերամ սարդարի զօրամասերը մի քանի օրից յետոյ կը լինեն Թէ՛ըանում։ Ղշլաղում Սիփէհդարը կառավարչական զօրքերի հետ ունեցած մի թեթև ընդհարման ժամանակ ջարդ է տուել նրանց, բայց չէ հետապնդել նրանց, չուզենալով ժամանակ կորցնել։ («Գազ. Կոп.»)

—

Թէհրանից հաղորդում են, որ Նէջէֆի մուշտայիդները հետևել հեռագրին են ուղարկել Գիլանի շրջանի գեներալ-նահանգապետի անունով. «Ռուսաստանին ուղղված մեր խնդիրքը աջողութեամբ պսակվեց։ Ռուսաց զինուորները ետ են կանչված, իսկ մնացողները բոլորովին չեն միջամտելու մեր ներքին գործերին։ Ուստի մենք խընդրում ենք ձերդ պայծառափայլութեանը, որպէս քաջ ու ազնիւ պարսկի, առաջվայ նման արի լինել քո զօրքերով և հատատակամութեամբ դիմել որոշված նպատակին. և պէտք է յիշել, որ քաջ մարդու մահը ոսկի է, իսկ վախկոտի կեանքը՝ կեղտ դրամ։ Ռուսական զօրքերը ետ կանչվելուց յետոյ պալատական կամարիլիան հասկացաւ, որ Ռուսաստանը նրան աջակցելու մտադրութիւն չունի։ Մի քանի ժամանակ առաջ դիկտատորութիւն անողների դրութիւնը այժմ յուսահատական է։ Շատերը թողնում են շահին և իրանց ստացուածքը ճակատագրի կամքին ու փախչում լինները։ Ով փոդաւոր է՝ անցնում է արտասահման։ Ներկայումս շահը, բացի Լեախովից, ուրիշ ոչ ոք չունի, որի հետ խորհրդակցէր։ Ասում են արդէն, որ պատրաստութիւններ են տեսնվում Պարսկաստանի պետի փախստի համար»։ («Գազ. Կոп.»)

ԹԻՒՐԲԻԱՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 20 յունիսի

Զինովիեվը սուլթանից ընդունվեց վերջին ունկնդրութեան։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 20 յունիսի

Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտը մի առանձին թռուցիկով յորդորում է մակեդոնացի յոյներին չը տարվել կոմիտէտական ագիտացիաներով հաստատված կարգ ու կանոնի դէմ և սպառնում է խստագոյն պատիժ տալ նրանց, որոնք կը հետևեն ագիտատորների խորհուրդներին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 21 յունիսի

«Կօրրէսպոնդէնց Բիւրոյին» հաղորդում են Սալոնիկից զօրքերի տեղափոխութեան մասին։ Հեծեալ զօրամասերը Պրիէպոլում, Քէօփրիւլիում, Իշտիբում և շրջականներում հրաման ստացան կենտրոնանալ Մօնաստիրում և միանալ այն զօրամասերի հետ, որոնք գնում են Սելֆիջէ և Գրէբէնի։ Ի նկատի ունենալով լարված յարաբերութիւնները մակեդոնական կոմիտէտների և յոյների միջև՝ շուտով սպասվում է պաշարման դրութեան մտցնումը։ (Հ. Գ.)

ԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

—

Լօնդոն, 21 յունիսի

Դումայի անդամները տեսան համալսարանը և ուսանողական կօլէջները, որոնցից մէկի մէջ պատրաստված էր նախաճաշ։ Փոխ-կանցլերը առաջարկեց Էդուարդ թագաւորի և թագաւոր Կայսրի կենացը, պրոֆէսօրներից մէկը առաջարկեց հիւրերի կենացը։ Բօբրինսկին խմեց Օքսֆօրդի համալսարանի բարգաւաճման կենացը։ Պրոֆէսօր Վինոգրադով, որը դասախօսութիւններ է կարդում, խմեց ռուս համալսարանների բարգաւաճման կենացը։ Նրան պատասխանեց Միլիւկով։ Ապա Վինոգրադովի մօտ տեղի ունեցաւ գարգէնպարտի։ Դումայի անդամները երեկոյեան վերադարձան Լօնդոն։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 20 յունիսի

Երէկ երեկոյեան ի պատիւ ռուս հիւրերի տեղի ունեցաւ բառուտ Լօնդոնի համալսարանի մէջ։ Ներկայ էին մօտ 800 մարդ, գլխաւորապէս կրթական աշխարհի ներկայացուցիչներից։ Ընդունվեց պարլամենտական միութեան ֆրանսիական խմբակի հրաւէրը՝ այցելել Լօնդոնից յետոյ Պարիզ, ուր մտադրութիւն կայ ճաշ տալ, ուր ներկայ են լինելու Պիշօնը և երկու պալատների նախագահները։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 19 յունիսի

Մէնշէօն-Խաուսում լորդ-մէրի մօտ տեղի ունեցած նախաճաշի ժամանակ Միլիւկովը, խօսելով իբրև օպպոզիցիայի լիդէր, յայտնում է, որ ռուսաց Միապետի այցելութեան առիթով ծագած ամենազլխաւոր թիւրիմացութիւնը կարող է համարվել վերացած արդէն պատգամաւորների Լօնդոնում լինելով (ծափահարութիւններ)։ Նա այսօր իմացաւ, որ Լօնդոնի քաղաքային կօրպորացիաները ի պատիւ Թագաւորի գալստեան կը մատուցանեն շնորհաւորական ուղերձ ոսկէ տուփի մէջ զետեղված (ծափահարութիւններ)։ «Ոչ ոք, ի հարկէ,—ասում է Միլիւկովը,—չէ սպասում ինձանից գովասանական խօսքեր գոյութիւն ունեցող ռուսական սահմանադրական հաստատութիւնների մասին (ծիծաղ). մենք կը կամենայինք, որ բաւականաչափ ընդարձակվէին Դումայի իրաւունքները, ընտրողական օրէնքը ամրակայվէր, ռուսական օրէնսդրական հաստատութիւնները համակարգութեան մէջ դրվէին (բացագանչութիւններ՝ «լսեցէք»). բայց քանի դեռ Ռուսաստանում գոյութիւն ունի օրէնսդրական պալատը, որ հսկողութիւն ունի ելեմտի վրա, ռուսական օպպոզիցիան կը լինի Նորին Մեծութեան օպպոզիցիան, այլ ոչ Նորին Մեծութեան՞դէմ» (ազմկալի ծափահարութիւններ)։ Ապա խօսելով միջազգային յարաբերութիւնների մասին, Միլիւկովը մասնաւորապէս անում է այն, որ 1907 թ. համաձայնութիւնը երկու անգամ փայլուն կերպով դիմացաւ փորձութեան» (ծափահարութիւններ»)։ Մեր փոխադարձ վստահութիւնը վերացրեց անխուսափելի պատերազմը Բալկաններում, հնարաւորութիւն տալով արագութեամբ յարմարվելու յանկարծակի յեղաշրջման համար։ Պարսկաստանի բարդութիւնները մեր ներկայ մտերմական յարաբերութեան շնորհիւ հնարաւորութիւն կը տան մեզ շատ հեռուն չը գնալ միջամտութեան անհրաժեշտութեան դէպքում և առանց այն էլ չափազանց ծանր պատասխանատուութիւն վերցնել մեզ վրա (ծափահարութիւններ)։ Վերջացնելով իր ճառը, Միլիւկովը հրաւէր է կարդում Անգլիայի ներկայացուցիչներին այցելել Պետերբուրգը, ուր նրանց սպասում է նոյնանման սիրալիր ընդունելութիւն։

Կոմս Բօբրինսկին ընդգծում է այն, ինչով որ պատմականօրէն տարբերվում է Լօնդոնի Սիտին, այն է հաւատարմութիւնը դէպի անգլիական միապետները և դիմացկունութիւնը անհատական ազատութիւնը պաշտպանելու խնդրում։ Նա մատնանշում է, որ Դուման Նիկոլայ II կայսրի կամքով պսակում է Ալէքսանդր II կայսրի հիմնարկած ինքնավարութեան շէնքը։ Այդ պատճառով Դուման ներկայանում է ոչ թէ էկզոտիքական մի բան, այլ ռուս ժողովրդի պատմական ու ազգային ձգտումների հետ շաղկապված մի հաստատութիւն։ Երբորդ Դուման աշխատում է, մեծ Անգլիայի հաստատութիւնների նման, պատուաստել միապետներին հաւատարիմ լինելու, քաղաքացիների անհատական ազատութեան և տեղական հաստատութիւնների ինքնուրոյնութեան սկզբունքները։

Գուչկովը, շնորհակալութիւն յայտնելով սիրալիր հիւրասիրութեան համար, խնդրում է Ռուսաստան գալ ոչ միայն յանուն քաղաքավարութեան, այլ և մօտիկից ճանաչելու նպատակով, որովհետև արժէ յատկապէս ուսումնասիրել նոր Ռուսաստանը, որը Միապետի կամքով մտաւ սահմանադրական պետութիւնների շարքը։ «Մենք,—ասում է Գուչկովը,—առանձնապէս գգացված ենք լորդ-մէրի առաջարկած կենացով մեր Միապետի առողջութեան համար։ Հաւատացած եղէք, որ դէպի իր Միապետը ունեցած անսպառ անձնուիրութեան բնական զգացմունքին ռուս ժողովուրդը միացնում է անսահման շնորհակալութեան զգացմունքը այն մեծահոգի ակտի համար, որով ռուսաց Թագաւորը կոչեց ժողովրդին մասնակցելու երկրի օրէնսդրական աշխատանքներին և վարչութեան վերահսկողութեանը։ Ամեն մի պատմական դարաշրջան, ամեն մի պատմական անձնաւորութիւն բնորոշվում է շատ զանազան տեսակ գծերով, բայց լինում է գերիշխող մի գիծ, որի շնորհիւ այդ դարաշրջանը կամ այդ անձը պատմութեան բաժին է դառնում։ Ես համոզված եմ, որ մեր Թագաւոր Նիկոլայ II անմահ կը լինի ազգերի ու պատմութեան յիշողութեան մէջ հէնց նրանով, որ նա մեր պետութիւնը մտցրեց սահմանադրական պետութիւնների ընտանիքը»։ Դուչկովն ասում է. «Իրաւ է, այդ վիրատեղծագործութեան աշխատանքի ժամանակ մենք երբեմն հարկադրված ենք օգուտ քաղելու հին շէնքերի նիւթերից. մենք չենք կարող նայել մեր անցեալի վրա բոլորովին բացասական տեսակէտից, բայց եթէ պահպանողականութիւնը բարդացրել է գործը, այնուամենայնիւ միայն նա չէ, որ ապահովել է վերջնական աջողութիւնը։ Դումայի գործունէութեան տեսութիւնը տալուց յետոյ, Գուչկովը ընդգծում է, որ Ռուսաստանը երկար ժամանակ վայելում էր քաղաքներում ու զեմստվոներում տեղական ինքնավարութեան լայն զարգացած սիստեմը։ «Մենք ձգտում ենք աւելի ուժեղ կերպով շեշտելու այդ սիստեմի ռամկավարական բնոյթը, մանակից դարձնելով ինքնավարութեան գործում ազգաբնակութեան այնպիսի տարրերին, որոնք լոկ շատ թոյլ կերպով էին ներկայացված կամ թէ բոլորովին չեն էլ ներկայացված։ Մենք կը ցանկանայինք ստեղծել ինքնավարութեան նոր միութիւններ, որոնք աւելի մօտիկ լինէին կանգնած ազգաբնակութեանը, վերջապէս կը ցանկանայինք ինքնավարութեան բարիքը տարածել կայսրութեան մասերի, մանաւանդ ծայրագաւառների վրա, որոնք չեն վայելում այդ բարիքները։ Մի շարք օրէնքներ, որոնք անցան Դումայի վերջին սեսսիայում, իրականացնում են կրօնական հանբերողութեան սկզբունքները, որ դեռ շատ առաջ յայտարարված էին մեր Թագաւորի հրատարակած 1905 թ. ապրիլի 17-ի մանիֆէստում։ Վերջապէս պետական պաշտպանութեան հարցը լուրջ, կենդանի ու ջերմ հետաքրքրութիւն է զարթեցնում ազգային ժողովում, որովհետև մենք գիտենք, թէ ինչպիսի կարևոր գործօն է հանդիսանում խաղաղութեան համար Ռուսաստանի զինուորական ոյժը»։

Վերջում Դուչկովը մատնանիշ է անում, որ Ռուսաստանի քաղաքական ազատութիւնը և ժողովրդի մասնակցութիւնը պետական գործունէութեան մէջ աճել են տեղական ինքնավարութեան հողի վրա։ «Տեղական ինքնավարութեան դպրոցումն են կազմակերպվել այն մարդիկ, մշակվել այն ընդունակները, որոնք երաշխաւորում են մեր սահմանադրական բէժիմի հաստատուն առողջութիւնը և զարգացումը։ Այդ պատճառով դուք կը հասկանաք այն յատուկ ջերմութիւնն ու սիրալիրութիւնը, որը զետեղում են բարեկամները լորդ-մէրի և Լօնդոնի Սրտի կօրպորացիայի համար առաջարկված կենացի մէջ»։

Կոմս Բէնկէնդորֆը իր ճառի մէջ ի միջի այլոց նկատում է, որ երկու պատճառներով իրան յատուկ բաւականութիւն է պատճառում պատասխանել լորդ-մէրին. նրանցից առաջինը լորդ-մէրի արտասանած խօսքերն են Թագաւորի վերաբերմամբ։ «Պատասխանել նրանց,—ասում է կոմսը,—ես լիազօրված չեմ, սակայն կը հաղորդեմ նրանց Նորին Կայսերական Մեծութեանը։ Երկրորդ պատճառն իմ հայրենակիցների ներկայութիւնն է։ Ի հարկէ,—շարունակում է կոմսը,—ինձ չէ վիճակված նրանց «բարի գալուստ» ասելու. այդ արդէն ասել են անգլիացի բարեկամները. ինձ չէ վիճակված նաև շնորհակալութիւն յայտնել սիրալիր ընդունելութեան համար, որովհետև ինձանից աւելի լաւ կերպով այդ շնորհակալութիւնը յայտնեցին իմ հայրենակիցները։ Ինձ մնում է միայն միանալ այն զգացմունքներին, որ արտայայտվեցին այստեղ անգլիացիների կողմից Ռուսաստանի նկատմամբ, իսկ ռուսների կողմից Անգլիայի վերաբերմամբ։ Մնում է խորին յոյս ու հաւատ յայտնել, որ այդ զգացմունքները կը ծառայեն հաստատապէս ամրապնդելու և զարգացնելու մշտական բարեկամական յարաբերութիւնները երկու երկիրների միջև։ Նախ քան կը վերջացնեմ իմ ճառը բարեմաղթութիւններ անելով լորդ-մէրին, ես կուզենայի մատնանշել իմ հայրենակիցների այցելութեան նշանակութիւնը, իբրև մի նոր շաղկապ Ռուսաստանի և Անգլիայի միջև»։ Կոմս Բէնկէնդորֆը բարձրացնում է բաժակը լորդ-մէրի կենացը։ (Հ. Գ.)

ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆԸ ՍՈՒԼԹԱՆԻՑ

—

Հինգշաբթի, յունիսի 12-ին, էկսօրից յետոյ, սուլթանի կողմից յատուկ ուղարկված երեք կառքերով, թիւրքաշայոց նորընտիր պատրիարք Եղիշէ եպիսկ. Դուրեանը ուղեւորվել է Դոլմա-Բաղչէի պալատ՝ ընդունվելու համար բարձրագոյն ունկնդրութեան սուլթան Մուհամմէդ V-ի կողմից։

Կում-Կափուի պատրիարքարանից մեկնող հանդիսաւոր գնացքի առաջից գնում էր մի հոգևորական՝ ձի հեծած, ունենալով իր ձեռքին պատրիարքական ասան։ Նրան անմիջապէս հետևող կառքում բազմել էր պատրիարքն ինքը՝ ունենալով իր դէմը պալատական արարողապետ Թալաթ բէյին և պատրիարքարանի կափուքեհէային։ Երկրորդ կառքում գտնվում էին երկու արքեպիսկոպոս և պատրիարքարանի երկուաշխարհական անդամներ։ Իսկ երրորդում տեղ էին բռնել երկու հոգևորական և երկու աշխարհական։ Հանդիսաւոր գնացքին հետևում էին ձիաւոր քահանաներ և պատրիարքական բարապաններ։

Երբ հասան Դոլմա-Բաղչէի պալատը, պատրիարքն ընդունվեց առաջին սենեկապետից և պալատական մի քանի բարձրաստիճան պաշտօնեաներից։ Մի քիչ հանգստանալուց յետոյ, պատրիարքն ու իր հետևորդները ունկնդրութեան ընդունվեցին սուլթանի կողմից, որը շատ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեց։

Պատրիարքը հետևեալ ճառը արտասանեց.

«Ձերդ մեծութիւն, օգոստափառ տէր.

«Զը գիտեմ ինչպէս շնորհակալութիւն յայտնեմ ձեր կայսերական մեծութեանը, որ հաստատեց իմ ընտրութիւնը, ի գահ Կ. Պոլսի հայոց պատրիարքութեան, որ կատարվեց ազգ. ժողովի ձեռքով։

«Վեհափառ տէր, ձեր կայսերական մեծութեան բարձրացումն Օսմանի փառաւոր գահի վրա՝ ինքնին հաւատիք է, որ սահմանադրական օրէնքի բոլոր արամագրութիւններն ամբողջովին կը գործադրվեն, որ նըւիրական հայրենիքի մեծութեան համար եղբայրսիրութիւնը, անկեղծ բարեկամութիւնը, իրաւունքների և պարտականութիւնների հաւասարութիւնը կը պահպանվեն օսմանեան ազգի բոլոր տարրերի մէջ առանց կրօնի և ցեղի խտրութեան։

«Իմ ստանձնած պարտականութիւնների կատարման համար, պարտականութիւններ, որոնց կատարման համար հրապարակով երդուեցի, ես այն համոզումն ունեմ, որ ինձ կը շնորհվի ամեն տեսակ աջակցութիւն և դիւրութիւն։

«Թող արարիչ Աստուած, Բաշխիչը ամեն բարիքների, պահպանէ ձեզ՝ օգոստափառ, արդար և ազատաժիտ վեհապետիդ՝ ձեր փառապանծ գահի վրա»։

Սուլթանը իր գոհունակութիւնը յայտնեց Դուրեան սրբազանին՝ նրա պատրիարքական բարձր պաշտօնին կոչվելու առիթով։ Նա ասաց, որ իրան հաղորդվել են գերազանց ընտիր տեղեկութիւններ նորին ամենապատուութեան մասին, և յայտնեց իր անձնական հաւակրանքը հայ ժողովրդի նկատմամբ, որի իրական ընդունակութիւնները և կառավարութեանն անկեղծօրէն միանալը խորապէս գնահատում է ինքը։

Ունկնդրութեան միջոցին սուլթանը պատրիարքին շնորհեց Մէջիդիէի առաջին կարգի շքանշանը։

Ապա պատրիարքը նոյն զինուորական պատիւներով մեկնեց Դոլմա-Բաղչէից։

Ժամը 4-ի միջոցին պատրիարքը նոյն հանդիսաւոր ցերեմոնիայով գնաց Բ. Դուռ և այցելեց մեծ-վեզիրին և ներքին գործերի մինիստրին։ Նա այցելութիւններ տուեց նոյնպէս և արդարադատութեան և դաւանութեան մինիստրին, զինուորական մինիստրին և գեներալ-ինսպեկտոր Մահմուդ Շեվքէթ փաշային։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 15 յունիսի

Նախընթացներով յիշել եմ, որ բացի Թաւրիզից՝ ամբողջ Ատրպատականն անիշխանութեան է մատնված։ Նորանոր փաստեր կուտակվում են իրար վրա։ Ասլից ստացված նամակներից և եկողներից իմանում ենք, որ այդ քաղաքի շրջակայքում՝ Մակուի խանի մարդիկ կողոպտել և աւերել են 40—45 գիւղ։ Թշուառ գիւղացիները մերկ ու ակլոր խուժել է քաղաք, իր չոր գլուխը փրկելու համար։

Ղարադաղից մօտ 200 հոգի Բահիմ խանի ձեռքից գանգատաւորներ են եկել։ Եկողները պատմում են, որ յիշեալ խանը զբաղված է իր կողոպուտները հնչիւն դրամի վերածելով։ Ներկայ բէժիմը հնարաւորութիւն չէ տալ գանգատաւորներին բաւարարված վերադառնալու։ Ամբողջ Պարսկաստանի պաշտօնէութիւնը, համարեա՝ ամենաստորին աստիճանից մինչև ամենաբարձրը, Բահիմ խանի ոգով է սնված։ Տարբերութիւնը այն է, որ Բահիմ խանը, լինելով գռեհիկ և լեռնական անձնաւորութիւն, չէ կարողանում իր էութիւնը աքօղել, մինչ այդ աջողվում է՝ քաղաքներում և մայրաքաղաքներում ապրող պաշտօնէութեանը։

Արդաբիլի անիշխանութիւնը ստիպել է ռուսաց հիւպատոսին ուժեղացնել իր պահակազօրքը։

Նոյն անիշխանութիւնն է տիրապետում և Պարսկաստանի այլ մասերում, որը ակներև է Իրանի գիտակից դասին։

Փաստերը ցոյց են տալիս, որ այն շրջաններում, ուր ռուսական զօրք չը կայ, անիշխանութիւնը աւելի մեծ չափեր է ընդունում։ Նոյնիսկ երկրի ժողովուրդը ապատանում է ռուսաց հիւպատոսարանը և պաշտպանութիւն խնդրում։

Ռուսաց մի զօրամաս, 700 հոգուց բաղկացած, չորս թնդանօթներով վերադարձաւ Կովկաս։ Քաղաքի խաղաղութիւնը ապահովելու համար ռուսները կարիք չունեն մեծ ոյժ պահելու։

Սարսափելի յայտնութիւններ կան շահսևան ցեղերի վայրագութիւնների մասին. Արդաբիլի շրջակայքը։ Հաշտարի և Գարմարի բերրի գաւառները ժառանգած են այդ կիսավայրենի ցեղերի ընչաքաղցութեան։ Այս րոպէին, երբ գրում եմ այս տողերը, լսում եմ սրտաճմլիկ, աղեխարշ պատմութիւնը մի գիւղացու, որ այդ վայրենիների ձեռքից փախել է այս կողմերը՝ կորցնելով ամեն ինչ։

Ռուսաց հիւպատոսարանը, իմանալով որ զանազան ուժեր ոյժեր մտադիր են ստոր միջոցների դիմելով անուանարկել ռուսաց բանակը, պաշտօնապէս յայտնել է այդ մասին կառավարութեան՝ միջոցներ ձեռք առնելու համար։

Զգոյշ պիտի լինեն մեր հայրենակիցները իրանց գործելակերպի մէջ... եթէ իրանց հայրենիքի շահերը նկատի ունեն միայն։

Իբօ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

—

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II այսօր թողնում է Թիֆլիսը և մեկնում իր պաշտօնատեղին, Էջմիածին, սկսելու իր կաթողիկոսական գործունէութիւնը։

Մնալով ամբողջ 10 օր մեզ մօտ, մենք ամենքս ամենայն հնարաւորութիւն ունեցանք քննադատական և զննողական աչքով դիտել և խորհել, որոշելու համար մի կարևոր հարց—ինչ է տալու մեզ նոր Կաթողիկոսը։

Գուցէ այս հարցը լուծելը դեռ վաղաժամ է, բայց, անկասկած, ամենքը կը խոստովանեն, որ Մատթէոս II կարողացաւ արդէն կատարել մի մեծ գործ, որ սկզբում շատերին անհաւատալի էր թւում, մի գործ, որ շատ պէտք է հեշտացնէ նրա ապագայ գործունէութիւնը։

Մատթէոս II կարողացաւ շատ կարճ ժամանակամիջոցում բարձրացնել կաթողիկոսութեան նշանակութիւնը ոչ միայն հայ ժողովրդի, այլ և կառավարութեան աչքում. նա կարողացաւ վստահութիւն ներշնչել դէպի հայոց եկեղեցին, դէպի այդ եկեղեցու պետը և դէպի հայոց հոգևորականութիւնը, վստահութիւն, որ մի քանի տարիներից ի վեր խախտված էր և հէնց այդ խախտումը պատճառ էր լինում շատ անհաճոյ և սուր ու լարված յարաբերութիւնների հայ եկեղեցու և պետութեան միջև։ Նա կարողացաւ բարձրացնել հայ եկեղեցու, հայոց կաթողիկոսութեան հեղինակութիւնը և հայ ժողովրդի աչքում, հեղինակութիւն, որ վերջին հարյուրամեակի օրով կաթողիկոսութեան նշանակութիւնը բոլորովին նսեմացել էր։

Վստահութիւն և հաւատ—ահա այն, ինչ որ Մատթէոս II Ռուսաստան ուղղակի բերեց կարողացաւ ներշնչել և կառավարութեանը, և իր հօտին։ Իսկ մի անգամ, որ լինի հաւատ և վստահութիւն, նրա ապագայ գործունէութիւնը չի հանդիպի մեծ և անընկճելի խոչընդոտների։ Ճանապարհը արդէն հարթված է, խութերը չքացած։

Մի հարց միայն կարող է պատճառել հոգս և տարակուսանք. կը գտնի՞ արդեօք Մատթէոս II Էջմիածնի վանքում, ուր ամեն կարգ ու կանոն, կարգապահութիւն խանգարված է, ուր անտեսական, հոգևոր, բարոյական կեանքը քայքայված է, ուր երկպառակութիւնը և ինտրիգները միաբանների մէջ դեր ի գլուխ տիրում են, կը գտնի՞ արդեօք այդ ամենից հոգվից և հովից երերուն վանքի մէջ գործակիցներ, անձնուէր, գործունեայ, եռանդուն աջակիցներ՝ առաջ տանելու եկեղեցու վերաշինութեան և վերանորոգութեան մեծ գործը, գայթակղված մտքերի բուժումը, քայքայված անտեսութեան վերականգնումը։

Դժբաղդաբար այդ հարցին դրական պատասխան տալ չենք կարող, բայց հաւատացած ենք, որ Մատթէոս II, իր արդէն ցոյց տուած մեծ տակտով և խոհեմութեամբ, կը կարողանայ և այդ դժուարակնճիռ գործի միջից պատով և աջողութեամբ դուրս գալ և ընտրել իրան այնպիսի աջակիցներ, որոնք հաւատարմութեամբ և ճշդութեամբ կատարեն իր տնօրէնութիւնները և ընթացք տան իր ծրագիրներին։

Հաւատով և վստահութեամբ ուղեկցում ենք Մատթէոս II-ին Էջմիածին։

Շահրիար

ԲԱՆԿԷՏ

—

Պոլսի հիւրերի Թիֆլիս մտնելու օրից հասարակութեան մէջ ցանկութիւն էր լսվում պատուել նրանց յատուկ սեղանով։ Այդ ցանկութեան ընդառաջ գնացին ինժեներ Գր. Կիրակոսեան և Հ. Առաքելեան կազմակերպելով կիրակի, յունիսի 21-ին, երեկոյեան ժամը 9-ին, Վէրայի «Ֆանտազիա» այգում, մի բանկէտ, որին ներկայ էին Կ. Պոլսի ազգային երեսփոխանական ժողովի ատենապետ Մինաս Զերաղ և երեսփոխան Գրիգորիս վարդապետ Պալաքեան։ Հասարակութեան զանազան խաւերից ներկայ էին 50-ից աւելի սեղանակիցներ։ Բանկէտի կառավարիչներ ընտրվեցին սեղանակիցների կողմից Ալ. Խատիսեան և Ալ. Քալանթար։

Սեղանը զարդարված էր ծաղիկներով։ Նուագում էին տեղական սազանդարներ։

Առաջին բաժակը առաջարկեց Ալ. Քալանթար առաջին մեծ հիւրի՝ Նորին Վեհափառ

փառութեան Մատթէոս II-ի կենացը և, դիմելով Մինաս Չերազին և Գրիգորիս վարդապետին, ասաց. «Շնորհակալութիւն ձեզ, որ բերիք մեզ համազգային ընտրեալին, որ կոչված է իր կոչման բարձրութեան վրա դնելու կաթողիկոսական գահի հետ կապված կարևոր խնդիրները և իրագործելու մեր իղձերը»։

Երկրորդ բաժակը առաջարկեց Ալ. Խատիսեան Մինաս Չերազի կենացը, ոչ միայն անձնապէս, այլև յանձին նրա Թիւրքիայի հայութեան։

Երրորդ բաժակը առաջարկվեց Գրիգորիս վարդապետի կենացը։

Բոլոր կենացները ընդունվեցին բուռն ոգևորութեամբ և կեցցէներով։

Գեղեցիկ, սրտաշարժ ճառեր արտասանեցին ի պատասխանի Մինաս Չերազը և Գրիգորիս վարդապետը։ Նրանք աւետեցին ողջոյն Բոսֆորի ափերից. նրանք յայտնեցին, որ ռուսահայերին նուէր բերին իրանց ամենաթանգագին գոհարը, զրկեցին իրանց պատրիարքական աթոռը մի կարող ոյժից, զարգացնելու համար ռուսահայոց պատրիարքական աթոռը, և անսասան համոզումն յայտնեցին, թէ ռուսահայերը կը շրջապատեն սիրով և համակրութեամբ ու կը փարեն Մատթէոս II-ի շուրջը և կաջակցեն նրան ամեն կերպ ի գլուխ բերելու այն մեծ միսսիան, որ դրված է նրա վրա։

Խատիսեան, Ղ. Աղայեան, Ց. Տէր-Միրաքեան, Գ. Վարդանեան, Ռ. Խանազատեան, Հ. Առաքելեան, Ալ. Քալանթար, Ճուղուրեան քահանայ արտասանեցին ճառեր և առաջարկեցին բաժակներ։ Երգիչ Ամիրջանեան և ուրիշ սեղանակի ցներ երգեցին ազգային և ժողովրդական երգեր։ Առհասարակ բանկէտը անցաւ ուրախ, զուարթ և սրտագին։

Մեծ օվացիաների առարկայ եղաւ Մինաս Չերազ, որի կենացը, իբրև հայ գրողի, հրապարակախօսի և վիպասանի, առաջարկեց երկրորդ անգամ խմել Հ. Առաքելեան։

Սեղանակիցներից մէկը՝ Ստեփան Պօղոսեան նուէր մատուցեց Չերազին մի շքեղ ծաղկեայ զամբիւղ և 25 ռուբլի ևս նուիրաբերեց յօգուտ Աղանայի աղէտեալների։

Բանկէտը թողեց հաճելի տպաւորութիւն և ամենքը հեռացան գիշերվայ ժամը մօտ 2-ին գոհ սրտով։

Հարկաւոր ենք համարում շեշտել Ալ. Խատիսեանի մի ճառը, որի մէջ այն միտքը արտայայտեց, թէ նա, իբրև անհատ, վերջին՝ տարիները շատ մեկուսի էր պահում իրան էջմիածնական և կաթողիկոսական գործերից և վերջին ընտրութեան ժամանակ Նոյնիսկ շատ քիչ էր հետաքրքրվում ընտրութիւններով, որովհետև կաթողիկոսական աթոռը շատ նսեմացել էր. բայց այժմ Մատթէոս II կարճ ժամանակում այնքան բարձրացրեց կաթողիկոսական աթոռի հեղինակութիւնը և հմայքը, որ նա մի առանձին հպարտութեամբ և բերկրութեամբ մասնակցում է ամենքի ցնծութեան և ջերմօրէն հետաքրքրվում է ազգային-եկեղեցական գործերով։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, առաւօտեան ժամը 10-ին, արտակարգ գնացքով Թիֆլիսից մեկնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II Իզմիրլիանը։

Վեհափառի գնացքը բաղկացած կը լինի սալօն-վագոնից, I և II կարգի վագոններից և ապրանքատար վագոնից։

Մարշրուտը նոյնն է, ինչ որ տպվեց «Մշակի» յունիսի 20-ի (№ 131) համարում։

Վեհափառին կուղեկցեն իր շքախումբը՝ բաղկացած Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանից, Շուշու թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շախեանից, թիւրքահայ Գրիգորիս և Մեսրոպ վարդապետներից, էջմիածնի սինօդի անդամներ Բարգէն և Մեսրոպ վարդապետներից, Թիֆլիսի կօնսիստորիայի նախանդամ Եփրեմ վարդապետ Սուքիասեանից, Մորէն վրդ. Մուրադբէգեանից, թիւրքահայոց ազգային ժողովի նախագահ Մինաս Չերազից։

Կարգադրիչ յանձնաժողովի կողմից ուղեկցելու են Ա. Բիշմիշեան, ինժ. Կիրակոսեան, Հ. Առաքելեան (նաև «Մշակի» կողմից), Ս. Ցարութիւնեան, Իս. Ցարութիւնեան, Ս. Եսայեան, Գիւտ ք. Աղանեան, Եր. Լալայեան։

Ցանկութիւն են յայտնել ուղեկցել Ղ. Աղայեան, Տիգրան Նազարեան՝ միջազգային մասուլի կողմից, Ա. Սարուխանեան՝ հայ-կաթոլիկ համայնքի կողմից։

—

Կաթողիկոսական ժաղրուտի մասին հեռագրվեց բոլոր այն տեղերին, որոնք տեղեկութիւն էին խնդրել սկզբից։

—

Վեհափառի՝ Սանահնի վանքը բարձրանալու համար հեռագրվեց Շուլաւէր, կառք ուղարկելու համար։

—

Վեհափառի Թիֆլիս մտնելու բօպէից հեղեղի նման սկսեց թափվել ամեն կողմից խնդրագրեր։ Կաթողիկոսի կարգադրութեամբ այդ խնդրագրերից նրանք, որոնք վերաբերում են զուտ նպատակներին, կուղարկվեն Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան խորհրդին, իսկ ամուսնալուծական խնդրին վերաբերող խնդրագրերը կը տարվեն Էջմիածին և այնտեղ քննվելուց յետոյ պատասխանը կուղարկվի խնդրատուներին։

—

Երկուշաբթի, ժամը 11-ին, Նորին Վեհափառութեան ներկայացաւ Բագուի պետական միջնակարգ դպրոցների ծնողական ժողովների կենտրոնական խորհրդի նախագահ Հայկ Տէր-Միքայէլեանցը և տուեց մի բանաւոր՝ զեկուցում Բագուի միջնակարգ ուսումնարաններում ներկայումս աւանդվող կրօնի ու հայոց լեզուի դասաւանդութեան մասին։ Նորին Վեհափառութիւնը մանրամասն տեղեկութիւններ հարցնելուց յետոյ, գտնելով հարցը շատ լուրջ, առաջարկեց մի ամփոփ գրաւոր զեկուցում ներկայացնել։

—

Անցեալ օրը Վեհափառ Կաթողիկոսին ներկայացել էր մի մանկահասակ օրիորդ և ներկայացրել իր գանձարկղիկը լիքը մանր փողերով։ Օրիորդը բացատրել էր, որ նա ժողովել է զումարը բարեկամների տուած նուէրներից և այժմ նրան յատկացնում է Աղանայի որբ մնացած մանուկների օգտին։ Վեհափառի վրա մանկական գայլուն սըրտի մարդասիրական այդ նուէրը թողել է քաղցր տպաւորութիւն։ Վեհափառը զգացված օրհնել է քնքոյշ օրիորդին և քաջալերել նրա բարեսրտութիւնը։ Սակայն օրիորդի անունը մնացել է անյայտ։ Ցանկալի է, որ գիտցողները յայտնեն անունը, որպէսզի կարելի լինէր յիշատակել նրան նուիրատուութեան հետ միասին։ Մանկական գանձարկղիկում եղել է 10 ր. 55 կ.։ Օրիորդի արածը թող դեղեցիկ օրինակ լինի իր բազմաթիւ ընկերուհիների համար, որոնց սրտին նոյնպէս պէտք է մօտ լինէր որբ քոյրերի վիճակը։

—

Տ. Նազարեան, որ մտադիր է ուղեկցել Վեհափառ Կաթողիկոսին մինչև Էջմիածին՝ իբրև «Լա Պրէս Ասսօսիէ» կովկասեան յատուկ թղթակից, իր հետ տանում է լուսանկարիչ, որ եւրօպական իլլիւստրասիօնների համար պիտի լուսանկարել տայ Վեհափառի ուղևորութիւնը Թիֆլիսից Էջմիածին։

«Լա Պրէս Ասսօսիէն» մատակարարում է շրջաբերական տեղեկութիւններ եւրօպական և ամերիկական թերթերին, հրատարակվում է յատկապէս լրագիրների համար, լոյս է տեսնում Պարիզում։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բ ա գ ո ւ, 14 յունիսի

Տեղիս դպրոցների հոգաբարձութիւնը այսօր ժողովի էր հրաւիրել հայ հասարակութեանը, յայտարարելով որ, իբրև երկրորդ ժողով, անկախ ծխականների թւից, ժողովը օրինաւոր պիտի համարվի։

Զբաղմունքի առարկաներն էին. 1) դպրոցների նիւթական տգնապալից դրութիւնը, 2) հոգաբարձուների հրաժարականը և 3) նոր հոգաբարձուների ընտրութիւնը։

Հոգաբարձութեան նախագահ Պապաջանեան բացելով ժողովը՝ առաջարկեց թուով 25—30 ժողովականներին նախագահ ընտրել ու անցնել գործի։

Ժողովականները միաձայն ընտրեցին Ան. Քալանթարին, իսկ քարտուղար՝ Պ. Մելքոնեանին։

Ծխականներից մէկը, Ց. Քաջազնունի, նախքան նորընտիր նախագահի խօսելը, հետաքրքրեցնող յայտնեց, որը բառացի առաջ եմ բերում. «Վեհափառ Կաթողիկոսին Բալաջարի կայարանում ընդունելու համար կայացած վերջին ծխակ. ժողովում որոշվեց, որ ոչ մի պատգամաւոր ոչ մի աւելորդ խօսք չասէ բացի բարի գալուստ ու բարի ելք մաղթելուց, սակայն մեր պատգամաւորների նախագահ Մ. Պապաջանեանը ժողովի որոշումը խախտել է այն ատիճան, որ ճառը համարեա թէ քաղաքական բնաւորութիւն է ստացել։ Այս յայտարարութիւնը ժողովականները լռութեամբ լսելուց յետոյ, հոգաբարձ. նախ. Պապաջանեան անցաւ կայացած ժողովի նպատակին։ Նա յայտնեց, որ նիւթական սուղ միջոցների պատճառով հոգաբարձական կազմը երաշխաւոր չէ, որ 1909—10 ուսումնական տարվայ համար որոշված դպրոցական տուրքը կը հաւաքվի, նոյնիսկ շատերը մերժում են որոշված դրամը վճարել, ուստի առաջարկում է նոր հոգաբարձուներ ընտրել, յայտարարելով որ, գուցէ, ներկայ հոգաբարձական կազմին չեն հաւատում. աւելի լաւ է նոր ընտրութիւն կայացնել, որպէսզի կարելի լինի ուսումնարանների գոյութիւնը պահպանել։

Ապա իր ճառի մէջ իրաւացի կերպով դատապարտեց հասարակութեան անտարբերութիւնը, որ տարվայ մէջ 2—3 անգամ ժողովի չեն գալիս, որպէսզի լսեն, տեսնեն, կարդան ուսումնարանների հաշիւը, այլ մութ անկիւններումն են խօսում։

«Ներկայ ուսումնական տարվայ համար 34 հազար ռուբլի բիւջէ կայ,—ասաց Պապաջանեան,—սակայն ահա քանի ամիս է անցել, յոյս չը կայ, որ կարելի լինի ժողովել։»

Եղիշէ աւ. քահ. Գեղամեան.—Իրաւ չը տալու պատճառը ոչ թէ հոգաբարձութեան կազմն է, այլ հայ հասարակութեան սովորութիւնն է այդ, որը մահնա է գտնում, որպէսզի իրանից փող չը դուրս գայ։ Որպէսզի հասարակութիւնը այլևս զանազան պատճառաբանութիւններ չը կարողանայ անել, անհրաժեշտ է դրամական սիստեմը փոխել. ինչպէս ուսումնարաններ բացելը, նոյնպէս և դրամ ժողովելը պէտք է դնել ապակենտրօնացման սիստեմի վրա։ Բաղաքը բաժանել 10 մասի, իւրաքանչիւր մասը պիտի ունենայ իր հոգաբարձուն և ուսումնարանը։ Այդպէս է և ծխական եկեղեցական դպրոցների կարգը, որի մասին կայ կաթողիկոսական կարգադրութիւն, որ իւրաքանչիւր եկեղեցի իր թաղում առանձին եկեղեց.-ծխական դպրոց պիտի ունենայ։ Բայց, դժբաղդաբար, մեզանում երկու եկեղեցի է, իսկ ուսումնարանների պահանջը չափազանց։

Ա. Վաչեան դատապարտում է հասարակութեան անտարբերութիւնը, ասելով որ 40,000 հայ բնակիչ ունեցող Բագուն այդպիսի ծանրակշիռ հարցերի ժամանակ 40 հոգով է միայն մասնակցում ժողովին։

Ար. Առաքելեան.—կան մի քանի քահանաներ, որոնց հետ հոգաբարձութիւնը ընդհարում է ունեցել և որոնց շարժառիթը եղել են քահանաների անձնական շահերը. այժմ դրանք աշխատում են հոգաբարձութեան վարկը հասարակութեան առաջ ձգել։

Քաջազնունի վրդովված կերպով առաջարկում է, ի նկատի առնելով «հայ հասարակութեան հրէշային տարօրինակ անտարբերութիւնը», փակել դպրոցները... Այդպիսի հասարակութիւնն արժանի չէ դպրոցներ ունենալու, աւելի լաւ է եղածը, հաւաքելիք դրամը ծախսել Շամախու գիւղերում մի քանի դպրոցներ պահելու։

Ա. Վաչեան կարծում է, որ քաղաքի հաշւով հայ-ռուս դպրոց բացելով հաւանական է դրութիւնը թեթևանայ։

Եր. քահ. Գեղամեան նկարագրեց, թէ ինչպէս քաղաքային դրութիւն սկսեց տիրել վերջին 3—4 տարվայ ընթացքում հայոց դպրոցներում, թէ ինչպէս Դայիանեան դպրոցի 30,000 ր. դրամը փչացաւ, նոյնը և Ախալցխայի ուսումն. տարեկան 25,000 ր. եկամուտ ստացվող գոյքը և այլն, և յորդորեց անձնանուիրութեամբ առաջ գնալ, չը վհատվել։

Բագուն դեռ այդպիսի ժողով չէր տեսել. այդ ժողովից և հոգաբարձութեան հրաժարականից արդէն պարզ երևում էր, որ դանակը ոսկորին է հասել և բազմատանջ հոգաբարձութիւնը ստիպված է ձեռքերը ծալած յետ կանգնել։

Ժողովը տևեց ցերեկ. ժամը 12-ից մինչև 4-ը։ Երկար վիճաբանութիւններ շատ եղան։ Վերջը ժողովի նախագահ Ան. Քալանթարը ժողովականների խորհուրդով հետևեալ եզրափակումը դուրս բերեց, որը և հաւանութիւն ստացաւ։

1-ին՝ խնդրել հոգաբարձութիւնից, որ շարունակէ իր գործունէութիւնը, թէկուզ փշոտ էլ լինի նրա անցնելու ճանապարհ։

2-դ՝ 40—50 հոգուց մի ժողով գումարել հասարակութեան գանձան խաւերից և եկամուտի աղբիւրներ մտածել. և միաձայն խնդրեցին Բ. Մ. Դօլուխանեանին, որ սա անցնէ դրամական ժողովի գլուխը։

3-դ՝ ծխականութեան արդիւնքի մասին շարունակել հոգևորականութեան հետ սկսված բանակցութիւնը։

Այնուհետև Թ. Զաքարեանը հոգաբարձութեան կողմից յայտարարեց, որ հոգաբարձութիւնը դպրոցների գոյութիւնը պահելու և աւելի բարգաւաճ դրութեան հասցնելու համար դիմել է մի այլ միջոցի և բանակցութիւն է վարում։ Բաղումում, ինչպէս ըմ. Զաքարեան ասաց, տարեկան 1000—1500 պակաս է տեղի ունենում, 1000-ից աւելի թաղում, մի քանի հազար մկրտութիւն, գերեզմանօրհնէք, տնօրհնէք, և այդ բոլորի եկամուտը հասնում է 80,000 ռուբ.։ Այդ եկամուտը հասնում է քահանաների ձեռը։ Ընդամենը 8 քահ. կարող է Բագուն կառավարել, և եթէ իւրաքանչիւր քահ. 4000 ր. ռոճիկ նշանակվի և այդ եկամուտները ընդհանուր եկեղեցիների կասսան մտնեն, տարեկան 40,000 ռուբլուց աւելի կը մնայ, որը կարող է ոչ միայն եղած դպրոցները պահել, այլ և աւելացնել եղածների վրա։ Ցայտնեց և այն, որ նոր գերեզմանատան գնելը բաժանելիս դրամական տուրք պիտի չառնակել, յօգուտ դպրոցի։

Ժողովի վերջում Պապաջանեան խնդրեց ժողովականներին, որ իրաւունք տրվի 6000 ր. բնտա վերցնել ուսումն. պարքը վճարելու, որի համար երէցփոխ Կաճկաճեանը մուրհակ է տուել։ Ժողովականները հաստատեցին այն պայմանով, որ առաջիկայ մուտքից անմիջապէս բնտաները յետ վերցվեն։

Ս. Գարագաշ

—

Էջմիածին, 18 յունիսի

Վանքի բակում էլեքտրական գոյնզգոյն լուսաւորութիւն են պատրաստում, որպէս զի Կաթողիկոսի Էջմիածին մուտք գործելու երեկոյեան հրավառութիւն լինի։

Միաբանութիւնը, գլուխ ունենալով Տեղապահին, գնալու է Էջմիածին կայարան Կաթողիկոսին դիմաւորելու համար։ Մինչև այժմ Վաղարշապատի հասարակութիւնը դեռ ևս վերջնականապէս չէ որոշել՝ թէ ինչպէս ընդունէ Հայրապետին։

Ճանապարհորդ

—

Ն ո ր ա գ ի ւ (Շուշու գ.), 15 յունիսի

Մեր գիւղօրայքն էլ ազատ չը մնացին խուզարկութիւններից։ Առաջ խուզարկել են խնաբաղեցի Ալէքսան Բէգլարեանի՞ տունը, որտեղից հանել են մի մօսինի և մի բերդանկա հրացան, իսկ երէկ էլ գաւառապետի օգնականը, ինսպէկտորը և 6 ստրաժնիկ եկան Խրամուրթ և ուղղակի կանգնեցին նոր բացված խանութի առաջ, հրամայեցին տանուտէրի օգնական Աղաբէկ Գրիգորեանցին կոտրատել կողված բանալին, բայց Գրիգորեանը հրաժարվեց դռները կոտրատելուց, որի համար և գաւառապետի օգնականի կողմից ստացաւ ապտակ. դուռը բաց անելուց յետոյ պահանջեցին արհեստագործական վկայական, որը դեռ չէին ստացած պետ. գանձանից. այստեղից նրանք գնացին Մովսէս և Աւանէս Խաչատրեանցների բակը, ուղղակի մտան զոմը և հանեցին մի բերդանկա հրացան և մօսինի 500 փամփուշտ։ Այդտեղ գաւառապետի օգնականը յայտնեց, որ այսպիսով չէ կարելի զէնքեր հաւաքել, պիտի ամեն մի տուն ենթարկել մեծ քանակութեամբ տուգանքի, որպէսզի իրանք յանձնեն իրանց զէնքերը։ Խաչատրեանցները ձերբակալված չեն։

Ա. Զախարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երէկ Մինաս Չերազ և Գրիգորիս վարդապետ Պալաքեան այցելեցին Հայոց Ազգագրական Ընկերութեան թանգարանը և շատ գոհ մնացին դիտելով Ե. Լալայեանի պեղումների արդիւնքը։

✦ «Մշակի» № 130-ի ներքին լուրերի բաժնում մենք հաղորդել էինք Նուխու գաւառի Դաշբուլաղ գիւղացի հոգևոր հիւանդ Յովհաննէս Մէհթարեանցի կորստեան մասին։ Այժմ տեղեկացնում են մեզ, որ յիշեալ Մէհթարեանցը գտնված է արդէն։ Նրան ինչ-որ անյայտ մարդիկ կողոպտել են, հանելով հագի չուխան, տանելով մորթէ գտակը, արծաթէ զօտին և մօտ ունեցած 30—35 ռուբլի փողը։ Տարված են մօտ 100 ռուբլի արժողութեամբ իրեր։ Առնս 18-ին Մէհթարեանցը մի խումբ հայրենակիցների հետ միասին վերադարձել է իր ծննդավայրը։

✦ Թիֆլիս վերադարձաւ ֆինանսների մինիստրութեան կողմից նշանակված Կովկասի Փոխարքայի խորհրդի անդամ Ն. Ֆ. Զունկովսկին, որը պաշտօնով Պետերբուրգ էր գնացել։

✦ Անցեալ ուրբաթ օրը կայացաւ Ջերմուկախօսական դումայական մասնաժողովի տեխնիքական բիւրօյի նիստը, ուր ինժենէր Գ. Շահբուդաղեանը զեկուցեց ծախսերի նախահաշիւը։ Լողարանական մասը կազմակերպվելու է Պեսարիզօրսկի օրինակով։ Աշխատանքների արժէքը հաշված է 1,200,000 ռուբլի։ Մանրամասն ծրագիրը կը ներկայացվի այս տարվայ աշնանը։

✦ Դադարած «Զվէնի Ապրի» վրացերէն թերթի փոխարէն յունիսի 21-ից սկսել է լոյս տեսնել «Զանգի» անունով թերթը։

✦ Ինչպէս հաղորդում է «Զանգի» թերթը, Պետական Դումայի անդամ Է. Դէգէլէգօրին տեսակցութիւն է ունեցել Թիֆլիսի գեներալ-նահանգապետի հետ տեղիս բանտերում տիրող կարգերի առիթով։ Գեն.-նահանգապետը խոստացել է գործերը քննել և բանտարկեալների համար օրէնքով սահմանված բոլոր իրաւունքները գործադրութեան մէջ դնել։

✦ «Ախուրեանը» հաղորդում է, որ Թ. Թօրամանեանը Բագարանի հետազօտութիւնները կատարել է և այժմ անցել է Խծկոն, որտեղ կը մնայ մինչև յուլիսի սկիզբները և ապա կը վերադառնայ դարձեալ Անի, քաղաքի և շրջակայքի քարտէզը, մինչնաբերդի, ներքին և արտաքին քաղաքների հին և նոր պարիսպների յատակագծերը պատրաստելու համար։

✦ Յունիսի 23-ին վրաց պատմա-ազգագրական ընկերութեան շէնքում կը կայանայ սովորական ընդհանուր ժողով, ուր կակարաձէն կը կարդայ մի բեթերատ Վրաստանի XIV և XV դարերի ազգագրութեան մասին։

✦ Կովկասի Փոխարքայի լիազօրի պաշտօնը Պետերբուրգում, որ մտնում է մինիստրների խորհրդի կազմի մէջ իբրև Փոխարքայի ներկայացուցչի, վերացվում է։ Ինչպէս յայտնի է, յիշեալ պաշտօնը մինչև օրս վարում էր բարօն Նօլդէն։

✦ Յունիսի 21-ին, երեկոյեան ժամը 7-ին, Ախալցխա քաղաքի բնակիչ Բարիկ Աւետիսեանցը Կուր գետում՝ Վանքին մօտիկ լողանալու ժամանակ, ընկել է խոր տեղը և խեղդվել։ Աւետիսեանցի անշնչացած դիակը հանելով ջրից ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը։

✦ Յունիսի 20-ին, շաբաթ օր, արհեստաւորաց վարչութեան շէնութեան մէջ տեղի ունեցաւ արհեստաւորների աւագի (գօլովայի) ընտրութիւնը։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեց Կարապետ Սերովբեանցը, որ երկար տարիներ վարել է այդ պաշտօնը։ Կանդիդատ է ընտրվել Միխայիլ Մելենչուկը։

✦ Յունիսի 21-ին քաղաքի զանազան մասերում կայանաւորված են Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից աքսորված և առանց թոյլտուութեան Թիֆլիս վերադարձած Բաշինսկի գաւառի ընակիչ Վասիլիյ Օմանիձէ, Թիֆլիսի քաղաքացի Բահիա Շահ-Վալադ-օղլի և պարսկահպատակ Կարապետ Ցարութիւնեանց, որոնք ենթարկվում են օրինական պատասխանատուութեան։

✦ Յունիսի 20-ին 3-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը պահակ զինուորներով շուրջկալի ժամանակ Բազարնայա և Ռուսական փողոցներում կալանաւորել է 8 հոգի անցագիր չունեցողներ, իսկ 9-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը պահակ զինուորներով Աւճալեան փողոցում կալանաւորել է 12 հոգի։ Կալանաւորվածների անձնաւորութիւնները ստուգվում են։

✦ Յունիսի 21-ին 8-րդ քաղաքամասում շուրջկալի ժամանակ կալանաւորված են 6 հոգի անցագիր չունեցողներ և 6-րդ քաղաքամասում՝ 5 հոգի։

✦ Թիֆլիսի ազնուականների հողային բանկի հսկիչ կոմիտէի նախագահ ընտրվել է գեներալ Կազբէկ, փոխ-նախագահ՝ իշխ. Ս. Վախվախով։

✦ Թիֆլիսի նահանգապետը Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին ուղարկել է Թէլաւի քաղաքային վարչութեան խնդիրը Թէլաւում ներկայ տարվանից արական գիմնազիա բանալու վերաբերեալ։ Քաղաքի միջոցներից քաղաքային վարչութիւնը յատկացրել է յիշեալ գիմնազիան բանալու համար միանուագ 2000 ր.։ Նահանգապետը իր կողմից պաշտպանում է ներկայ միջնորդութիւնը։

✦ Թիֆլիս վերադարձաւ և ստանձնեց իր պաշտօնը Կովկասի շրջանի նոր հրամանատար ինժ. Ս. Ֆ. Դօֆման։

✦ Կովկասի լեռնային վարչութեան կառավարիչ ինժ. Բուգաեվիչը վերադարձաւ Պետերբուրգից, ուր գնացել էր յանձնարարութեամբ, և ստանձնեց իր պաշտօնը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Յունիսի 20-ին Զուբալովի անուան ժողովրդական տան թատրոնում հայկական սեկցիան դերասան Արաքսեանի բենեֆիսին ներկայացրեց «Զարլէյի մօրաքոյրը» ֆարսը, 3 գործ., հեղին. Բրանդոն Թօմասի, թարգ. Ամիրեանի։

Վաղուց յայտարարված «Տրիլբին», որի ներկայացումը թերևս այդ երեկոյ թատրոն յաճախող հանդիսականներից շատ-շատերը սպասում էին տեսնել բեմի վրա, խմբի անդամներից մէկի հիւանդութեան պատճառով յետաձգվել էր։ Այդ առիթով լսվում էին նոյնիսկ դժգոհութիւններ։

«Զարլէյի մօրաքոյրը» ֆարսի ներկայացումը անցաւ շատ սահուն միահաժուռ ոյժերով և առանց աչքի ընկնող թերութիւնների, եթէ չասենք, որ տեղ-տեղ, անշուշտ դերակատարների անփորձութեան շնորհիւ, խաղի մէջ սպրդվում էր անցանկալի արուեստականութիւն, և այնքան անբնական, որ չափից դուրս արդէն նկատելի էր դառնում հանդիսականների համար, ինչպէս օրինակ՝ շիշերի անյայտանալը, որը, որպէս թէ չէն նկատում հիւրերին անհամբեր սպասող տանտէրերը, ժանաւանդ սեղանը պատրաստող և կօնեակի համար «հոգի տուող» սպասաւոր Բրատոը։

Բենեֆիցիանտ Արաքսեանը (լորդ Ֆրենկերա Բաբրլէյ), որ Զարլէյի մօրաքրոջ կեղծ դերն էր խաղում, իր կենդանի ու հմուտ խաղով փայլ տուեց ներկայացմանը և մեծ բաւարարութիւն պատճառեց հանդիսականներին։

Միւս դերակատարներից աչքի էին ընկնում տ. Զարէ՝ Զարլէյի իսկական մօրաքոյր Դոննա Լիւցիա դը-Ալվադօրէսի դերում և Ալլահվերդեան՝ Ստեփին Սպտելյագի դերում։

Միւսները գոհացուցիչ էին իրանց դերերում. համեմատաբար թոյլ էր Ցոլակը։

Հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով բեմ էր կանչում Արաքսեանին, ինչպէս բենեֆիցիանտի, որը օվացիաներից զատ՝ ստացաւ նաև մի պակէ, այնպէս և տիկին Արաքսեանին, որ Կէտտի Վեդէնի դերին կարողացաւ ներշնչել իր աշխուժութիւնը։

Ի վերջոյ մխիթարական է նկատել, որ հայ հասարակութիւնը, առանձնապէս այն մասը, որը հնարաւորութիւն չէր ունենում երբէք թատրոն յաճախել, շնորհիւ էժանագին ժողովրդական ներկայացումների, այսօր ընտելանում է թատրոնին։ Այդ երևոյթը անշուշտ չը պէտք է վրիպի հայ բեմին նուիրված դերասանների աչքից։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 28 մայիսի

Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Յով. Մուսայէլեանին, որ նեղութիւն է կրել Բէնդէրէգէզում մի խումբ հայերի մէջ յօգուտ ընկերութեանս հանգանակել 437 դրան և ուղարկել մեզ։ Ստանալով այդ դրամը մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում նաև բոլոր նուիրատու պարոններին, որոնց անունները դնում ենք ստորև։ Ցանկալի էր, որ Բէնդէրէգէզի այդ մի խումբ հայերի վերաբերմունքը բարի օրինակ լինէր այլոց՝ սատարելու ընկերութեանս, որ վերջին տարիներում ինչ-ինչ անաջող հանգամանքների պատճառով անտեսական խիստ սուղ դրութեան մէջ է և անկարող է իրան առաջադրված նպատակներին ծառայել պահանջված կարգի չափով։ Ցաւոտի է ամենքին, որ Ատրպատականի գաւառացի միքանի տասնեակ հազար հայ ազգաբնակութեան կրթութեան գործի ամբողջ ծանրութիւնը տարիներից ի վեր ընկած է եղել ընկերութեանս վրա, բազմաթիւ երկսեռ դպրոցներ պահվել են ընկերութեանս միջոցներով և խնամքով, շատ դպրոցներ և աղքատ աշա-

կերտ-աշակերտուհիներ սացել են նպատակայն այսօր ցաւ է մեզ համար, որ տընտեսական պատճառներով ստիպված ենք մեծ թւով կրճատել մեր դպրոցների թիւը։ Ցաւով ենք, որ զեսակից և մանուկ սերնդի կրթութեան գործը իրանց սրտին մօտ հաւատարիմ անձինք կը շատպեն իրանց բարոյական աջակցութեամբ և նիւթական օժանդակութեամբ օգնութեան հասնել ընկերութեանս՝ կրկին անգամ վերարանալու այն դպրոցները, որոնք՝ վակված էին անցեալ ուսումնական տարվայ ընթացքում։

Բէնդէրբէյգինուիրատուներն են. պ. պ. Ցով. Մուսայէլեան 30 ղ., Մ. Գրիգորեան 50 ղ., Բ. Տ. Ցակովբեան 10 ղ., Ն. Ցակովբեան 30 ղ., ոմն (ստորագրութիւնը անընթեռնելի) 6 ղ., Տ. Մելիք-Աբրահամեան 30 ղ., Ա. Ցովհաննիսեան 5 ղ., Գ. Մ. 20 ղ., Ս. Շահնազարեան 5 ղ., Բարգէն և Սիրանոյշ 50 ղ., Առաքել Մատթէոսեան 30 ղ., Անահիտ Մելիք-Ցովսէփեան 20 ղ., Սոդոմոն Նանայանեան 30 ղ., Ա. Ս. Նանարաջիեան 30 ղ., Բախշի Նասանց 5 ղ., Ա. Տ. Մ. 20 ղ., Ղահրաման 6 ղ., ոմն (ստորագրութիւնը անընթեռնելի) 30 ղ., Ցով. Փանիեան 10 ղ։ Գումար 437 դրամ։

Թաւրիզի Հայուհեաց Բարեգ. Միացեալ Ընկ.

Վարչ. Նախագահ՝ Մ. Նազարբէկեանց

—

Վան, 17 մայիսի

Թէև ասկէ առաջ յայտարարած էինք, թէ Վարագայ Հ. վարժարանի յօբելեանը պիտի տօնուի յունիսին, սակայն նկատի առնելով զանազան տեղերէ եղած դիմումները, յանձնախումբս յարմար դատեց հանդէսը կատարել առաջիկայ սեպտեմբերի 13-ին։

Յայտնելով զաս ի գիտութիւն հասարակութեան, կը խնդրենք հաստատութեանս համակիրներէն փութացնել իրենց մասնակցութիւնը։

Դիւան Վարագայ Հ. վարժարանի՝

Յօր. Կեղր. Ցանձնախումբ

—

Մեղրի, 10 յունիսի

Մեղրիի երկդասեան-երկսեռ ծխական դպրոցի հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը իր շնորհակալութիւն է յայտնում «Գուստաւնիրիզ» գրախանութի գրավաճառ Գալստեանցին, որ իր հայրենի գիւղի գրադարանին 50 կտոր զանազան գրքեր նուիրաբերեց։ Գալստեանցի օգտաշահ վերաբերմունքը թող օրինակ դառնայ զանազան վայրերում գտնվող պատդուխտ մեղրեցիների համար։

Ի դիմաց հոգաբարձութեան՝

Գ. Իսրայէլեան

Աւագ-ուսուցիչ՝ Գ. Մելոյեան

—

Թիֆլիս, 20 յունիսի

Հնարաւորութիւն չունենալով անձամբ շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր անձանց, որոնք այցելեցին ինձ հիւանդութեանս ժամանակ, նոյնպէս և նրանց, որոնք հաճակրութիւն յայտնեցին ինձ նամակներով և հեռագիրներով,—յայտնում եմ նրանց ձեր լրագրի միջոցով իմ խորին շնորհակալութիւնը այն սրտագին համակրութեան համար դէպի ինձ, որը առիւրա կը մնայ թանգ յիշողութիւն ինձ համար։ Վ. Զէրբէզով

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԵՏԷԻ ՎԷՃԻ ԱՌԻԹՈՎ

Լրագրական վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ յունական և թիւրքական կառավարութիւնների յարաբերութիւնները Կրետէի առիթով օրէ-ցօր սուր կերպարանք են ստանում և սպառնում արիւնահեղ ընդհարում առաջ բերել։

Ցունաստանը ձգտում է սեփականել կղզին, իսկ Թիւրքիան՝ պաշտպանել իր սիւներէն իրաւունքները։

Սակայն ուշագրաւ է այն, թէ ինքը Կրետէի ազգաբնակութիւնը ինչպիսի դիրք է բռնել և ինչ է ցանկանում։

Նախ և առաջ պէտք է ասել, որ կղզու ազգաբնակութիւնը երկու տարրերից է բաղկացած՝ յոյներից և մահմէդականներից։ Վերջիններս փոքրամասնութիւն են կազմում։ Կրետացիների մեծամասնութեան տրամադրութիւնը ընորոշելու համար, անկասկած մօտ հետաքրքրութիւն է ներկայացնում յունական զօրքի կապիտան Արիստաֆօր Կարադիայի կարծիքը, որը Կրետէի գլխաւոր քաղաքում՝ Կանէում զինուորական հրամանգիչ է։ Բերլինում, «Ր. Շ.» լրագրի թղթակցի հետ խօսելիս, նա յայտնել է, որ ամեն մի կրետացու համար Ցունաստանը ոչ միայն մետրօպոլիա է, այլև նուիրական հայրենիքը, ուստի Ցունաստանի, Մակէդոնիայի, Կրետէի և Թիւրքիայի մէջ ապրող 6 միլիոն յոյներից 90 տոկոսը պատերազմի սկսելու դէպքում զէնքի կը դիմէ։ Իսկ պատերազմը, Կարադիայի ասելով, անխուսափելի է, եթէ հովանաւորող պետութիւնները յետ կանչեն այնտեղից իրանց զօրքերը։ Յետ չը կանչել չեն կարող նրանք, քանի որ խոստացել են կրետացիներին։ Ազգաբնակութիւնը կատարեց մեծ պետութիւնների պահանջները. այժմ իմ ցաւն է ուրեմն, որ իրանք էլ կատարեն իրանց տուած խոստումը։

Բարձրագոյն Դուռը շատ լաւատեղեակ է Կրետէի տրամադրութեանը։ Նա գիտէ, որ օտար զօրքերը հեռանալուն պէս, օսմանեան դրօշակից, որը իբրև մի բիծ կպած է կրետացիների աչքին, միայն կորչելը կը մնան։ Կրետացու կեանքի բաղձանքն է անկախութիւն ստանալը և յոյն ժողովրդի հետ ձուլվելը։ Ուրեմն է, որ կրետական երիտասարդութիւնը նախապատրաստութիւններ է տեսնում հրով ու սրով ազատվել թիւրքական լծից։

«Ի զուր են երիտասարդ թիւրքերը իրանց զէնքերը շառաչեցնում,—ասում է Կարադիա.—Ցունաստանին և Կրետէին յաղթելը այնքան էլ հեշտ չի լինի այժմ, ինչպէս այդ եղաւ տասը տարի առաջ։ Երիտասարդ-թիւրքերը յոյս ունեն Ցունաստանի դէմ թեթև յաղթանակ տանելով բարձրացնել իրանց վարկը երկրում։ Բայց չարաչար սխալվում են։ Նրանք աչքից բաց են թողնում արարական և ալբանական շարժումները, Մակէդոնիան և Արդիւլ-Համիդի դեռ ևս առկայծվող յոյսերը։ Թող միայն նրանք յոժարակամ չը հրաժարվեն Կրետէի սիւվերէնիտետից. մենք այնպիսի հրդեհ ձգենք Մակէդոնիայում, որ անտանելի լինի նոյնիսկ Կ. Պոլսում։

«Կրետէին յաղթելը մաքից հեռու բան է։ Ամեն մի կրետացի 17—65 տարեկան հասակը զինւոր է և այն էլ ներշնչված համահելլենականութեան գաղափարով, պատրաստ մինչև վերջին շունչը պաշտպանելու հայրենիքը, լաւ կազմակերպված ու զինված։ Յիշեցէք 1866 թւականը. երեք տարուց յետոյ միայն թիւրքական հարիւր հազարանոց զօրաբանակը կարողացաւ նըւաճել Կրետէն։ Քառասուն տարվայ ընթացքում Կրետացիների ինքնագիտակցութիւնը այնքան զարգացաւ, որ երեք պետութիւնների օգնութեամբ Արդիւլ-Համիդը հազիւ կարողացաւ Կրետական Ջրերում պարզել իր դրօշակը։ Այժմ նոյնը չէ, ինչ որ 12 և 40 տարիներ առաջ։ Կրետէն իրան անկախ կը յայտարարի և կը միանայ Ցունաստանին, իսկ Թիւրքիան ստիպված պիտի լինի հաշտվել այդ բանին։ Բայց եթէ նա կը մտածէ պատերազմել, այն ժամանակ մենք ցոյց կը տանք նրան, թէ ինչով կարող է երբեմն վերջանալ զինված ընդհարումը կղզու բնակիչների հետ։

«Վերջիններս լաւ գիտեն, որ ամենայարմար վայրերանն է և ամեն մի յոյն ընտանիք պատրաստութիւն է տեսնում պատերազմի։ Կանէան, կղզու այդ սիրտը, այժմ պատերազմական բանակի է նմանում. միտինգներ ու ժողովներ, քարոզներ եկեղեցիներում ու դպրոցներում,—ահա թէ ինչով է ապրում յունական մեծ ազգի այդ փոքրիկ բաղէն»։

Այդպէս է բնորոշում կրետացիների տրամադրութիւնը հելլէնականութեան ջատագով և թունդ ազգայնական Կարադիան. մօտիկ ապագան սակայն ցոյց կը տայ՝ թէ որքան ուղիղ են կամ սխալ նրա այդ տեղեկութիւններն ու յոյսերը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

20 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրվայ ընթացքում խօլերայով հիւանդացան 83, մեռան 16 մարդ. հիւանդանոցներում պառկած են 661 հոգի։

ՍԱՄԱՐԱ։ Պետական Խորհրդի անդամ զէմստվօյի կողմից ընտրվեց նահանգական պարգուլա Նաումօվը։

ՍՕԼԻԿԱՄՍԿ։ Հինգերորդ օրն է, այրվում է Ուսոլիէ առևտրա-արդիւնաբերական գիւղը։ Գործարանների կէսը արդէն ոչնչացել է։

ԲԼԱԳՕՎԷՇՉԷՆՍԿ։ Երէկ գիշերով իր բընակարանի մօտ վիրաւորվեց խուզարկու բաժնի պետի պաշտօնակատար Օլշանսկին։ Կասկածով ձերբակալված են 4 վրացիներ։

ԼՕՆԴՕՆ։ Նիւպօրտում պօստային նոր շինութիւններ կառուցանելու ժամանակ գտան 40 բանաւոր։

ԲԷՐԼԻՆ։ Բէյխստագն ընդունեց ծխախոտի հարցի օրինագիծը, որ իր ոյժի մէջ կը մտնէ հոկտեմբերի 1-ից։

ՆԻԻՊՕՐՏ։ Նոր նաւամատոյցի կառուցման ժամանակ հողի տակ մնացին 50 բանւորներ, որոնցից 26-ին կարող եղան ազատել։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Որովհետև Լուկաչին չաջողվեց կաբինէտ կազմել, Ազէգէլէի մինիստրութիւնը հաւանօրէն մի փոքր ժամանակ էլ կը մնայ իշխանութեան գլուխ։ Ազէգէլէն մեկնելու է Վիէննա, ուր կընդունվի Կայսրից։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական-գիւղացիական դաշնակցութիւնը դիմեց գերմանական գիւղացիներին մի ընդարձակ կոչով, որով խստագոյնս խօսվում է գիւղատնտեսների և բէակցիօն-պահպանողական խոշոր հողատիրութեան միութեան դէմ։ Պահպանողականապրար լրագիրները յիշեալ կոչը չը տպեցին։

21 յունիսի

ԲԵՐԼԻՆ։ Բէյխստագը ընդունեց երկրորդ ընթերցանութեան ժամանակ այն օրինագիծը, որը հարկ է սահմանում երկրի ներքին զործածութեան համար նշանակված հացի օղիի վրա 105 մարկ հէկտօլիկտի համար, արտածութեան համար նշանակված օղիի վրա 125 մարկ հէկտօլիկտի համար և հարկ պարֆիւմէրային իրերի վրա։ Դրանց վրա ներմուծման մաքս դնելու հարցը միաձայն մերժվեց։

ՎԻԵՆՆԱ։ «Ֆրէմդէնբլատտ» հաղորդում է, որ Էդուարդ թագաւորը վճռեց այս տարի էս Մարիէնբադ գնալ բժշկվելու համար։ Նրա զալուստը սպասվում է օգոստոսի առաջին կէսին։

ԲԵՐԼԻՆ։ Միտտելից, Բիրէրբախի մօտ, հեռագրում են, որ «Ցէպպելին 1-ը» երեկոյեան մօտ 10 ժամին յունիսի 21-ին շարժվեց պարզ աստղալից երկնքի ժամանակ դէպի Մէց։

Մէց։ Առաւօտեան 7 ժամին «Ցէպպելին 1-ը» աջողութեամբ իջաւ գետնի վրա։

ԲԵՐԼԻՆ։ Պրոֆէսսոր Խէրպէսէլ յայտնում է «Բերլիներ Տագէբլատ» և «Լոկալ-Անցէյգէր» լրագիրներում, որ խօսք չէ կարող լինել բևեռային արշաւանք կատարելու մասին ցէպպէլինեան օդապարիկով հիւսիսային բևեռին որոշ նպատակով հասնելու համար»։ Կոմս Ցէպպէլին,—յայտնում է Խերգէսէլ,—ի նկատի ունի դէպի կեանք հրաւիրել զուտ գիտական ձեռնարկութիւն բեւեռային անյայտ շրջանները հետազօտելու համար։ Ցէպպէլինեան օդապարիկները չափազանց յարմար են դրա համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օր ու գիշերվայ ընթացքում մայրաքաղաքում հիւանդացան 74, մեռան 37, հիւանդ են 662 հոգի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՈՒԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Լօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ձ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11—ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲԻԵՒՏ—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 ժ. ներքին. և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ 1½—2—ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՑԵՎՍԿԱՑԱ-ԷՆԳԵԼ—6—հ. ժ., մանկաբարձ., կանանց և երեխայոց։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Հավախարդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամարային երթեւեկութիւն

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԳՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ. Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ԶՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏԱՏԱՐ 1 ժ. 44 ր. գիշեր., Ալէքսանդրօպոլ է հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Զուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՊՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալէքսանդրօպոլ է հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԴ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԳՈՒՒՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. գիշ., ՄԱՐԴԱՏԱՐ. № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԴ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. երեկ., ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ԶՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հիւանդների բաժանմունքով

Թիֆլիս, Ելիզավետինսկայա փ., 79, տել. 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՔ. ԱՂԱԶԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և վարակի հիւանդ. (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻԻՐԻ—առ. ժ. 11—12-ը քթի բերանի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄԶԱՐԵՈՒԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և ծանկարարձ.։

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնոզով։ Միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծոցի պատաստումներ։ Ծծմայրի բ ցնոութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կոպէկ։ Ժպերացիաները և համաձայնագրերը ըստ համաձայնութեան։ Հիւանդների բժշկումները բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(կ. և.) 236. 100—35

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.

Վելիամինովսկայա փող., № 10.

(օ. մ.) 100—99

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ վեներական (սիֆիլիս), միզասեռական և մորթու ցաւերի։ Ընդունում է հիւանդ. Կովկասեան հանք. ջրերում—ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ և ԿԻՍԼՈՎՕԴՍԿՈՒՄ։ Հասցէն՝ Կիսլովոդսկ, հիւրանոց «Բոսֆոր»։

(օ. մ.) 100—94

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Մայիսի 15-ից ընդունում է հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, Վերխնի Բուլվար, տ. Գիրէյ, № 14. Пятигорскъ, Верхній Бульваръ № 14, д. Гирей.

(օ. մ.) 434. 20—16

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԳԻ ՃԱՇԱՐԱՆ

ԻՒԺԱՆԷ ԸՆԿ.

Գլխորդվալա փող., Վրաց Աղնական. ամարային Ծատրանին կից։ Տէլէֆոն № 233.

Այգում ամեն օր նուագում է լարանուագների երաժշտախումբը՝ պ. Պ. Պալիեվի ղեկավարութեամբ, ցերեկ. ժամը 2—4-ը և երեկ. 9—2-ը գիշ.։ ՃԱՇ.—2 տեսակ կերակուր՝ 60 կ., 3 տես.՝ 80 կ., 4 տես.՝ 1 ր.։ Ամեն տեսակ ուտելեղէնների և խմիչքեղէնների համար առանձին պրէյս-կուրանտ։

Գները չափաւոր են

Այգի-ճաշարանի մուտքը ձրի է։

(ա.օ.) 546. 50—12

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

որը ունի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանի կրթութիւն և երկարատև փորձառութիւն, պաշտօն է որոնում՝ դասատնեկապետի, գանձապահի, գործակատարի և ընդհանրապես դասական նեկային գործերի։ Ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրատուն։

Համաձայն է և Թիֆլիսից դուրս։

577. 1—1

„ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ"

Նոր գասագիրք՝ պատկերներով—հոգևոր, պետական և հասարակական միջնակարգ և ստորին երկդասեան ու հեռադասեան երկսեռ դպրոցների համար։

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ

Վաճառվում է բոլոր գրավաճառների և հեղինակի մօտ (Զրկինեանց եկեղեցի)։ Գումարով գնողներին 20% զեղչ։

Գրիգորիս ա.-ք. Երզնկեանց

(հ. կ.) 580. 2—1

ՊԱՐԴԶԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ

Օրիգինալները միայն Եատուրայից

Փոքրանակաև հաւաքածուները—3, 5 և 10 բուբլով—ուղարկվում են կանխավճար ստանալուց անմիջապէս։ Միրոնների համար՝ կաբինէտային նկարներ խոշորացոյցի համար և ուրիշ տեսակներ։ Հասցէագրել՝ A. Борнштейнъ, Лодзь, № 5. Ново-Цегельняная, № 6.

Պրէյս-կուրանտ ուղարկվում է մի հատ 7 կոպէկանոց պօստային մարկա ստանալուն պէս։

(հ.կ.ու.) (В. 39626) 578. 3—1

ՄԱՀ ԲԱՂԼԻՆՋՆԵՐԻՆ

Նորութիւն. էլիկամ չէ.

«ԿԼՕՊՕՎԻՆ»

Շուտափոյթ ոչնչացնում է բաղլինջներին և նրանց սատրը։ Սրուակի գինը 35 կոպ.։ Պահեստը միայն ԱՆՕՐԱՉԵՒ մօտ, ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ուղարկում ենք վերադիր վճարով։ Դեղավաճառներին զեղչ։ Պահանջեցէք յատուկ «ԿԼՕՊՕՎԻՆ ԱՆՕՐԱՉԵՒ»։

Հասցէ՝ Тифлисъ, памятникъ Воронцова, ул. Некрасова, № 14, складъ Ахобадзе.

(ա.օ.) 568. 30—3

Золотая медаль Лондонъ 1893 г.

ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДЕЛОКъ

ПРОВИЗОРА

Г. Ф. ЮРГЕНСЪ

БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО

ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ и ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.

БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА

ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ

1/1 КУС. 50 к. 1/2 КУС. 30 к.

Главн. складъ у Г. Ф. Юргенсъ, Москва

89. 24—11

ՆԱԽԱԶԳՈՒ ՇԱՑՈՒՄՆ

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ

ЗАВОДСКАЯ МАРКА

Գրասենեակից Թիֆլիսում

Մեր ֆիրմայի հռչակով ԿԱՄԵՆԱՅՈՎ ՕԳՏՎԵԼ՝ մի քանի համանուն և ուրիշ ֆիրմաներ վաճառքի են հանել զտված օդի և այլ խմիչքեղէն մեր էտիկէտներին և ապրանքադրոշմին միանգամայն նմանեցրած էտիկէտներով և ապրանքադրոշմով պ. պ. սպառողներին մոլորեցնելու նպատակով։

Մի քանիսները նոյն իսկ չեն քաշվել էտիկէտների վրա նշանակել խոշոր տառերով Դ. Զ. Սարաջեվ, իսկ մանրատառ, համարեա չը նկատվող մակագրութեամբ՝ ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ։ Հետևաբար գրասենեակը խնդրում է մեր ապրանքը պահանջելուց ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ դարձնել անուան, հօրանուան և ազգանունի սկզբնատառերի վրա՝ Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ, միայն առանց «ՆԱԽԿԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ» յաւելուածի, նոյնպէս և գործարանային դրոշմի վրա՝ «ՎԱՅՐԻ ՈՉԽԱՐ ԾԱՅՈՒՄ ՎՐԱ»։

(ե.կ.) 362. 25—18

ԿՕՆԿՈՒՐՍԱՅԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լրացրած նոր կատալոգ (№ 26)

Ինժեն. Պ. Կ. ՇՄՈՒԼԵՎԻՉԻ

Լոյս է տեսել յունիսի 15-ին և ուղարկվում է բոլոր ցանկացողներին Զ Ր Ի։ Բացառապէս դիմել՝ Въ Контору книгоиздательства: С.-Петербургъ, Ивановская ул., д. № 6. (Телефонъ 236—85).

(17,18,20,21,23) (П. 94571) 557. 5—5

200 ՐՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ

ով ապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գնին։ 12 ր. տեղ միայն 3 ր. 95 կ. ուղարկում ենք 10 անհրաժեշտ, արժէքաւոր իր։ 1) սև պղպ. տղամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ, առանց բանալիի լարվող ժամացոյց, ըստէ առ ըստէ հշդած, 8 տարվայ երաշխաւորութեամբ։ 2) գեղեցիկ, չը սևացող շղթայ։ 3) նոյնպիսի նորաձև ըրելօկ։ 4) զամշի պարկ, ժամաց. փչանալուց պահելու։ 5) կաշուէ նորաձև քսակ 6 բաժ., հարթ և գրպանում պահելու խիստ նպատակաւոր։ 6) շանաւէտ նորոյթ—ամերիկակ. անվանագ «Մանիտա» ածելի, որով ամեն մարդ, առանց որևէ պատրաստութեան կարող է անվնաս և շատ հեշտ սափրվել։ 7) սափրվելու վրձին։ 8) նիկելի թաս։ 9) ածելին սրելու փոկ։ 10) գեղ. գոբելէ-մատանի «Օպալ» քարով։ Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 զարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն ստանալուն պէս, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Նոյնպիսի զարնիտ., աւելի լաւ մեխանիզմ ժամացոյցով, 4 ր. 50 կ., 2-ը 8 ր. 50 կ.։ Նոյնպիսի զարնիտ., 84 պր. արծաթէ ժամացոյցով՝ 8 ր. 25 կ., 2 զարնիտ.—16 ր.։ 1—2 զարնիտ. ճանիտ. 84 պր. արծաթէ ժամացոյցով՝ 8 ր. 25 կ., 2 զարնիտ.—16 ր.։ 1—2 զարնիտ. ճանիտ. 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Հասցէն՝ Т-во «ЗАРЯ», Варшава. Отдѣл. 23.

(9 23, յուլ. 7) (В. 37397) 526. 3—2